ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵԴԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վեդի քաղաքային համայնք
ք.Վեդի, Թումանյան 6, (0234) 2-33-32, (0234) 2-37-71 vedimeria@rambler.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 դեկտեմբերի 2012թվականի N 71

ՎԵԴԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2012-2016 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՔԱՌԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16 հոդվածի 2-րդ կետի պահանջով համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Վեդու քաղաքային համայնքի 2012-2016թվականների քառամյա զարգացման ծրագիրը /կցվում է/

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԷԴԻԿ
2. ԱՆԴՐՅԱՆ ԱՐՄԵՆ
3. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ
4. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԱՐՈՒՆ
5. ՄԱՆՈՒԿՅԱՆ ԼԱԵՐՏ
6. ՄԵԼՔՈՆՅԱՆ ՄԱՆՎԵԼ
7. ՆԱԶԱՐՅԱՆ ՀԱՅԿԱԶ
8. ՍԱՖԱՐՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ
9. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՄԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ _____ *ՎԱՐՈՒԺԱՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ*

Հայաստանի Հանրապետություն
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
Վեդու քաղաքապետարան

ՔԱՂԱՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ

ՔԱՌԱՄՅԱ

2012-2016 ԹԹ..

ԾՐԱԳԻՐ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ .....

Բաժին 1. Ներածություն.....

Քաղաքաշինություն և ճարտարապետություն .....

Շինարարություն և բարեկարգում, ճանապարհաշինություն .....

Արտաքին լուսավորություն.....

Տրանսպորտ .....

Կոմունալ ոլորտ .....

Առևտուր և սպասարկում .....

Բնապահպանություն .....

Եկամուտների հաշվառում և գանձում .....

Անշարժ գույքի կառավարում .....

Ներդրումային ոլորտ.....

Արտաքին ձևավորում և գովազդ .....

Կրթություն .....

Առողջապահություն .....

Սոցիալական ապահովություն .....

Երեխաների իրավունքների պաշտպանություն .....

Երիտասարդության հետ տարվող աշխատանքներ .....

Ֆիզիկական կուլտուրա և սպորտ .....

Մշակույթ.....

Բաժին 2.Հիմնախնդիրներ և 2012 -2016 թ. նախատեսվող միջոցառումներ .....

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Քառամյա ծրագրի մշակման հիմքերը

ՀՀ Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 53 հոդված.

Համայնքի զարգացման ծրագիրը

Համայնքի ղեկավարը մշակում է համայնքի քառամյա զարգացման ծրագիրը, որը ներկայացնում է նորընտիր ավագանու հաստատմանը՝ վերջինիս լիազորությունների ստանձնման օրվանից եռամսյա ժամկետում: Եթե համայնքի նորընտիր ղեկավարի լիազորություններ ստանձնելու ժամկետը համընկնում է նորընտիր ավագանու լիազորություններն ստանձնելու օրվանից եռամսյա ժամկետին, ապա համայնքի նորընտիր ղեկավարը քառամյա ծրագիրը համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացնում կամ ավագանու լիազորություններն ստանձնելու օրվանից եռամսյա ժամկետում կամ իր լիազորություններն ստանձնելու օրվանից հետո՝ երկամսյա ժամկետում:

Համայնքի քառամյա զարգացման ծրագրում պարտադիր կարգով ներառվում են համայնքի տարածական զարգացումը սահմանող՝ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման կամ դրանց փոփոխման (լրացման) մասին դրույթներ:

Համայնքի ավագանին քննարկում է ներկայացված ծրագիրը, կատարում է փոփոխություններ և իր որոշմամբ ընդունում է:

Համայնքի ղեկավարը տարեկան բյուջեների նախագծերը մշակելիս հաշվի է առնում համայնքի բնակչության կենսական շահերը, համայնքի քառամյա զարգացման ծրագիրը, ինչպես նաև առկա ռեսուրսները:

ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

*Վեդի քաղաքի զարգացման 2012-2016 թ. ծրագրի նպատակն է **Վեդի քաղաքի կայուն և համաչափ զարգացման ապահովումը, բնակչության կենսական շահերը և բարեկեցությունը, մարդկային զարգացումը՝ որպես հետևանք երաշխավորելով վեդեցիների կյանքի որակի էական բարելավումը: Վեդի քաղաքը պետք է դառնա մաքուր, կանաչ ու բարեկարգ, աշխատանքի և կարգուկանոնի, հարմարավետ, ավանդույթների և ապագայի քաղաք:***

2012-2016թ. քաղաքի զարգացման հիմնական ուղղությունները միտված են լինելու ենթակառուցվածքների զարգացմանը, բնակչության կենսապայմանների

բարելավմանը, բարեկեցիկ ու հարմարավետ միջավայրի ձևավորմանը, ինչպես նաև Գլխավոր հատակագծին համապատասխան քաղաքաշինական ծրագրերի իրականացմանը: Ծրագիրը մշակվել է՝ հաշվի առնելով ՀՀ Տեղական ինքնակառավարման մասին օրենքի պահանջները, ինչպես նաև այն օրինաչափ շարունակությունն է 2008-2012թթ. զարգացման ծրագրի: Զարգացման 2012-2016թթ. ծրագրի հիմնադրույթները բովանդակում է Վեդի քաղաքի սոցիալ-տնտեսական վիճակը և զարգացման հիմնական ուղղությունների, տարածական պլանավորման և ենթակառուցվածքների ընդհանուր զարգացման վիճակի վերլուծությունն ու կարճաժամկետ կանխատեսումները, առկա ռեսուրսները: Ծրագիրը ներկայացնում է Վեդի քաղաքի ընդհանուր վիճակի բնութագիրը, քաղաքային տնտեսության առանձին բնագավառներում առկա հիմնախնդիրները, ինչպես նաև 2012 – 2016թթ.. նախատեսված միջոցառումները:

Համայնքի զարգացման ծրագրի ռազմավարությունը

Համայնքի քառամյա զարգացման ծրագրի ռազմավարությունն է՝ բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով հետևողականորեն բարելավել համայնքի բնակչության սոցիալ–տնտեսական, մշակութային և հանգստի պայմանները, համայնքը դարձնել տարածաշրջանային զբոսաշրջության կենտրոն, մաքուր, բարեկարգ և գրավիչ բնակավայր:

Համայնքի զարգացման ծրագրի հիմնական ուղղությունները

- սոցիալական ուղղվածություն
- մշակութային ուղղվածություն

Համայնքի իրավիճակի գնահատում

Աշխարհագրական դիրքը, պատմական համառոտ ակնարկ

Պատմական համառոտ տեղեկատվություն համայնքի մասին

Վեդի քաղաքի հիմնադրման տարեթվի մասին ստույգ տեղեկություններ չկան: Նրա մասին առաջին հիշատակությունները գալիս են ուրարտական ժամանակներից: Նրա տարածքում և մոտիկ շրջապատում գտնվող բերդ-ամրոցները թվագրվում են Ք.ա. II-I հազարմյակներով, իսկ շինարարական աշխատանքների ժամանակ հանված

կարասները վերագրվում են մեր թվարկության III-IV դարերին, գերեզմանոցում պահպանվել են խաչի նշանով գերեզմանաքարեր (IX —Xդարեր):
Վեդի անունը առաջին անգամ հիշատակվում է XIII-XIV դարերում՝ Նորավանքում Օրբելյանների թողած նվիրագրական արձանագրություններում: Այնուհետև այն տարբեր ձևերով՝ Վեթի, Վադի, հիշատակվում է մինչև XIX դարի սկիզբը:
Ըստ ռուս աշխարհագիր Ի.Շոպենի, բնակավայրը 1830թ. ունեցել է Վերին Վեդի անվանումը: Այն 19-րդ դարի կեսին զբաղեցնում էր Վեդի գետի երկու ափերը, ուներ մեծ և հին եկեղեցի, 240 տուն թաթար և 12 հայ բնակիչ:
1828 թ. Վեդի թասարի մահալում Մակուի շրջանից վերաբնակվել են 1170 շունչ հայեր՝ 640-ը Դավալուում և 530-ը՝ Վեդիում:
XIX դարի վերջին Վեդի կոչվել է Մեծ /Բեյութ/ Վեդի, ուներ 2240 բնակչություն, այդ թվում 117 հայ բաղթական և հիմնականում թաթարներ /թուրքեր/: Վեդիի համար հայացման պրոցեսը սկսվել է 20 դարի քառասնական թվականների վերջերին: Մինչև 1930 թ. եղել է բավառակի կենտրոն, սիկ 1930 թ. սեպտեմբերի 9-ի վարչական ռեֆորմով ստեղծվել է Վեդու շրջան, որից 1938-1947 թթ. առանձնանում է Դարաքաղլարի շրջանը: Վեդի 1958թ. ունեցել է 4500 բնակիչ: 1962 թ. Վեդին ստանում է ավանի կարգավիճակ, իսկ 1996թ.՝ քաղաքի:

Աշխարհագրական դիրքի նկարագիր

Քաղաքի տեղանքը հարթ է, թույլ թեքված դեպի արևմուտք: Իսկ բուն կենտրոնական մասում գտնվում է հարթեցված գագաթով մոտ 10 մ հարաբերական բարձությամբ երկրաբանական ավելի հին ապարներից կազմված փոքրիկ բլուր: Ծովի մակերևույթից ունի 900 մետր բարձրություն: Մայրաքաղաքից հեռու է 48 կմ, երկաթուղային Այգավան կայարանից՝ 8 կմ, իսկ Երևան - Երասխ ավտոմայրուղուց՝ 9 կմ: Վեդին գտնվում է մերձարևադարձային կլիմայական գոտում, որտեղ ձևավորվել է կլիմայի չոր, խիստ ցամաքային տիպը: Ձմեռը ցուրտ է, անամպ, անհողմ: Հաստատուն ձյունածածկույթ ձևավորվում է ոչ ամեն տարի: Բնորոշ է ջերմաստիճանային շրջադասությունը: Ամառը շոգ է, տևական /4-5 ամիս/: Բնորոշ են լեռնահովտային քամիները, որոնց արագությունը կեսօրից հետո հասնում է մինչև 15-20 մ/վրկ-ի: Լեռնահովտային քամիները մեղմացնում են Վեդի քաղաքի ամառային տապը: Հարաբերական խոնավությունը հասնում է 15-20 տոկոսի: Գարունը կարճատև է: Առանձնապես հաճելի է Վեդու արևոտ, անհողմ, տևական աշունը, երբ հասունանում են այգիների ու դաշտերի բարիքները:Վեդի քաղաքում բնական լանդշաֆտը կիսաանապատային է: Հումուսից աղքատ գորշահողերը հազարամյակների ընթացքում ջրովի

երկրագործության պայմաններում վերածվել են կուլտուր-ոռոգելի հողերի: Տեղումների տարեկան քանակը 200-300 մմ է:

Ժողովրդագրություն

Համայնքի բնակչության թիվը և սոցիալական կազմը, այդ թվում՝

- կանայք - 7629 մարդ
- տղամարդիկ - 7170 մարդ
- բնակչության տարիքային կազմը (0-6, 7-17, 18-65, 65-ից բարձր տարեկան)

0-6	–	1042	մարդ
7-16	–	1674	մարդ
17-62	-	10544	մարդ
62 և ավել	-	1540	մարդ

Բնակչության չափահաս անդամներից 15 տոկոսը զբաղվում է արտագնա աշխատանքով: Այժմ Վեդի քաղաքի բացակայողների թիվը 2600 մարդ է:

- թոշակառուներ - 1780
- փախստականներ - 10
- միակողմանի ծնողազուրկ երեխաներ - 100
- երկկողմանի ծնողազուրկ երեխաներ - 6
- հաշմանդամներ - 400
- աշխատունակներ - 10544
- աշխատանք ունեցողներ - 2900
- գործազուրկներ - 1582
- ընտանիքների (ծխերի) թիվը - 2828
- «Փարոս» ընտանեկան նպաստների համակարգում գրանցված ընտանիքներ
- զոհվածների ընտանիքներ - 29

Տեղական ինքնակառավարման մարմինները

Համայնքի ավագանու անդամների թիվը – 11 ավագանու ադամ

Համայնքի ղեկավարի աշխատակազմի կառուցվածքը/ և հաստիքների թիվը – 40, որից 26-ը ՀԾ:

Համայնքի ձեռնարկությունները

Ձեռնարկությունների թիվը - 82

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Քաղաքաշինության բնագավառում Վեդի քաղաքի հաստատված Գլխավոր հատակագծի դրույթներին համապատասխան անցած տարիներին մշակվել և ներդրվել են ոլորտի ներդրումային գրավչությանը և գործարար միջավայրի

բարելավմանն ուղղված համալիր ծրագրեր՝ նպատակ ունենալով Վեդի քաղաքի համաչափ տարածական զարգացման առաջնահերթության սկզբունքի արմատավորումը:

ՀՀ կառավարության 30.11.2006թ. N 1726-Ն որոշմամբ հաստատվել է Վեդի քաղաքի Գլխավոր հատակագիծը: Այն գործողության մեջ է դրվել 2006թ-ից, որով նախանշվել էին քաղաքի զարգացման հեռանկարները մինչև 2020 թվականը:

- մշակվել և Վեդու քաղաքապետի, Վեդի քաղաքի ավագանու որոշումներով հաստատվել են մի շարք քաղաքաշինական՝ քաղաքի առանձին տարածքների գոտիավորման նախագծեր և առաջնահերթ շինարարության կառուցապատման գծագրեր:

Մասնավորապես գոտիավորման նախագծեր են մշակվել և հաստատվել կենտրոնական և հարակից փողոցների տարածքների համար.

- կազմվել են նաև այլ ծրագրեր
- կատարվել են գույքագրման աշխատանքներ
- այլ միջոցառումներ

2009թ. իրականացվել են Վեդի քաղաքի Գլխավոր հատակագծի նախագծի իրացման վերլուծություն և մինչև 2020թ. շինարարության ծրագրի կազմման աշխատանքներ:

Վեդի քաղաքի Գլխավոր հատակագծի իրացման վերլուծության և նախորդ տարիների մոնիտորինգի արդյունքների հիման վրա, 2010-2012թթ. կատարվել են քաղաքի Գլխավոր հատակագծի ճշգրտման աշխատանքները:

2012 թ. ընթացքում իրականացվել է Վեդի քաղաքի Գլխավոր հատակագծի փոփոխություն իրական իրավիճակի հետ:

Կատարվել են կառուցապատման նպատակով հողաբաժանման սխեմաների մշակման աշխատանքներ՝ աճուրդային կարգով հողամասերի վաճառք իրականացնելու համար:

Քաղաքի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի հրապարակային սակարկություններով (մրցույթներով և աճուրդներով) տրամադրման և օտարման նպատակով 2008-2012թ.թ. նախապատրաստվել են թվով 85 փաթեթներ (50 հատ աճուրդ, 35 մրցույթ): Հողամասերը նախատեսված են հիմնականում անհատական բնակելի տների կառուցման, ինչպես նաև բազմաբնակարան շենքերի կառուցման, հասարակական և այլ բնույթի կառուցապատման համար:

Վեդի քաղաքի փողոցաճանապարհային ցանցի կատարելագործման նպատակով համաձայնեցված նախագծի հիման վրա վերակառուցվել և

շահագործման են հանձնվել Թումանյան, Գայի, Ավ.Իսահակյան փողոցները և Պուշկին, Ս.Կասյան և Կոմիտաս փողոցների մի հատվածը:

Ասֆալտապատվել է Վեդի համայնքը մայրուղուն կապող ճանապարհի մի հատվածը / նախկին Ոսկետափ-Վեդի կամուրջի մասը/:

Պարբերաբար քաղաքի ամբողջ տարածքում իրականացվել են փողոցների բարեկարգման աշխատանքներ, փոսերի լցումներ:

2008-2012թթ. ընթացքում իրականացվել են նաև.

- Նախագծային ճանապարհների և փողոցների համար պատվիրվել են և կազմվել են նախագծանախահաշվային փաստաթղթեր

Հետիոտնային անցումներ

Հետիոտնի տեղաշարժման անվտանգության ապահովման և տրանսպորտի անարգել աշխատանքի նպատակով 2012թ. Գծվել են հետիոտն անցումներ թվով 5 հատ

- Արարատյան փողոց՝ Արարատյան 45 բազմաբնակարան շենքի դիմաց
- Արարատյան փողոց՝ մինչև լուսարձակ հասնելը և լուսարձակից հետո
- Թումանյան փողոց՝ մինչև լուսարձակ հասնելը և լուսարձակից հետո
- Կոմիտաս փողոց ՝ Ռազմական ոստիկանության մոտ

Տեղազննմամբ հնարավոր են համարվել նաև հետևյալ թվով 8 հասցեները

- Կոմիտաս փողոց – Դպրոցի դիմաց
- Արարատյան փողոց – Արարատյան 36 շենքի դիմաց
- Կասյան փողոց – դպրոցի դիմաց
- Կասյան փողոց – բազմաբնակարան շենքեր տանող հատված
- Արարատյան փողոց – Ա.Սիմոնյանի անվան հրապարակի բոլոր կողմերը

Քաղաքաշինության ոլորտում ներդրումային ծրագրերի զարգացման ուղղությամբ

Մասնավոր տարբեր ներդրողների հետ քննարկումներ անցկացնելու համար կատարվել են քաղաքի կոնկրետ տարածքների ուսումնասիրություններ և տեղադրվել են կանգառներ

- Արարատյան փողոց՝ վրա - 1 հատ

Պատրաստ են նաև 10 կանգառների տեղադրման փաստաթղթերը:

Բակային տարածքներ

Բակային տարածքներում բնակչության հանգստի և ժամանցի կազմակերպման, բարեկարգման, սպորտային և այլ խաղահրապարակների ստեղծման համար 2008-2012թթ. ծրագրի շրջանակում բակերում տեղադրվել են խաղային սարքավորումներ (2 հատ լրակազմ հավաքածու), լուծվել են արտաքին լուսավորության խնդիրները, 2008-2012թթ.. քառամյա զարգացման ծրագրում բնակչության առաջարկությամբ նշված հասցեներում /38 բակ/:

Ասֆալտապատվել ե Արարատյան 41, 43, 45, 47 շենքերի բակերը:

Մինի բացօթյա շուկաներ

Փողոցային առևտրի կարգավորման նպատակով Վեդի քաղաքի տարբեր հատվածներում մինի գյուղատնտեսական ապրանքների բացօթյա շուկաների կազմակերպման համար քննարկվել և տարածքների առաջարկություններ են ներկայացվել: Կայացվել է քաղաքապետի որոշում որով տրվել է թույլտվություն Ա.Սիմոնյանի և Գ.Սարոյանի անվամբ հրապարակների կից տարածքում իրականացնել բացօթյա առևտուր:

Շինարարություն և բարեկարգում, ճանապարհաշինություն

Վեդի քաղաքապետարանի հաշվեկշռում ընդգրկված են 50 ներհամայնքային ճանապարհեր, որոնց ընդհանուր երկարությունը կազմում է մոտ 56.971 կմ:

Փողոցների և հրապարակների ընդհանուր մակերեսը կազմում է 569.71 քմ:

Կատարվել է 38 շենքերի մաքրման աշխատանքներ:

2008-2012թթ. ջեռուցման համակարգեր են տեղադրվել ինչպես նախադպրոցական ուսումնական հաստատությունում /թիվ 2 մանկապարտեզ/, այնպես էլ գեղարվեստի դպրոցում:

Արտաքին լուսավորություն

Վեդի քաղաքի արտաքին լուսավորությունը ապահովվում են 6 ժամ միջին օրական միացման ռեժիմով: Շահագործվում և պահպանվում է 14 փողոցների, 38 բակերի 2 զբոսայգիների արտաքին լուսավորության ցանցը: 407 տարբեր տիպի լուսատուներ մոնտաժված են 407 արտաքին լուսավորության հենասյուների վրա:

Նոյեմբերի 1-ի դրությամբ Վեդի քաղաքի լուսավորության ցանցին են միացված Արարատյան փողոցը ամբողջապես, Կասյան փողոցի մի հատվածը, Գայի, Խանջյան,

Թումանյան, Գ.Չաուշ, Ն.Ստեփանյան, Հ. Շիրազ, Պ.Սևակ, Ս. Նիկողոսյան և Կոմիտաս փողոցի մի հատվածը:

Տրանսպորտ

Վեդի քաղաքում չեն գործում ներքաղաքային փողոդրամիջոցներ:

Քաղաքից Երևան, Արտաշատ և այլ համայնքեր գնալու համար բնակչությունը օգտվում է միջհամայնքային փողոդրամիջոցներից, որոնք.

Վեդի – Երևան – Վեդի – Յուրաքանչյուր ժամը մեկ անգամ , արժեքը 400 դրամ:

Վեդի – Արտաշատ – Վեդի – արժեքը 200 դրամ :

Այլ համայնքներ – արժեքը 100-150 դրամ:

Վեդի քաղաքում ավտոբուսներով իրականացվող ուղևորափոխադրումների տեսակարար կշիռը հանրապետականի ընդհանուր ծավալում դեռևս մնում է ցածր՝ կազմելով մոտ 15,0%, իսկ միկրոավտոբուսներին բաժին է ընկնում ուղևորափոխադրումների 20,0%-ը: Ոչ արդյունավետ հասարակական տրանսպորտի գործող երթուղային ցանցը և կառավարման համակարգը չեն խթանում առկա տրանսպորտային միջոցների, որն իր հերթին պատճառ է դառնում այդ ոլորտների պահպանման և շահագործման համար ավելի մեծ ծավալի պետական ներդրումների:

Հասարակական տրանսպորտի գործող համակարգը գրավիչ չէ նաև ոլորտում կատարվող ներդրումների համար:

Համայնքում գործում է մեկ տաքսի ծառայություն:

Վեդի քաղաքում հաշվառված է 1354 մեքենա, որից 570-ը հաշվառման են կանգնել 2008-2012թթ.:

Հաշմանդամների տրանսպորտային սպասարկ ում

Համայնքի ավտոկայանատեղիներում բացակայում են հաշմանդամների համար անհրաժեշտ պայմաններ:

Կոմունալ ոլորտ

Ջրամատակարարում և ջրահեռացում

Վեդի քաղաքի ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունները մատուցվում են «Հայջրմուղկոյուղի» ընկերության կողմից:

Ջուրը սպառողին բաշխվում է 38059.3 գծմ երկարություն ունեցող բաշխիչ ցանցի և 1000 խմ տարողությամբ 2 ջրամբարների միջոցով:

Վեդի քաղաք մտնող ջրաքանակը մատակարարվում է ինքնահոս եղանակով: 11

- օրվա ընթացքում ջրամատակարարման ժամերի միջին տևողությունը կազմում է 3-4 ժամ
- ջրի որակը բնակչությունը գնահատում է անբավարար

Բազմաբնակարան շենքերի կառավարում

Վեդի քաղաքում հաշվառված է 38 բազմաբնակարան շենք, որից վթարային են 3-ը: Թվով 38 բազմաբնակարան շենքերի կառավարումն իրականացվում է Վեդու քաղաքապետարանի քաղաքաշինության բաժնի կողմից:

Բազմաբնակարան շենքերի տեխնիկական վիճակը գնահատվում է անբավարար:

2008-2012թթ. ընթացքում իրականացվել է 3 բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգում:

Աղբահանություն և սանիտարական մաքրում

Վեդի քաղաքի սանիտարական մաքրման ենթակա փողոցների, հրապարակների, մայթերի, բակային տարածքների և այլ կառույցների ընդհանուր մակերեսը կազմել է շուրջ 30000 մետ ք.:

Սանիտարական մաքրման (ներառյալ ձմռան ամիսներին) աշխատանքներն իրականացվում են Վեդու քաղաքային կոմունալ ծառայության կողմից:

Աշխատանքներն իրականացվում են ամեն օր ձեռքի միջոցով: Մաքրման աշխատանքները ամռան ամիսներին կատարվում են ժամը առավոտյան 6-^{00}-ից մինչև 12^{00}, ձմռանը՝ 8^{00}-10^{00}:

Վեդի քաղաքի աղբահանության աշխատանքներն իրականացվում է <Մաքուր երկիր> մասնագիտացված կազմակերպության կողմից: Ստեղծվել է աղբահանության գումարների հավաքագրման միասնական շտեմարան, իրականացվել տեղեկատվության ամփոփում և տրամադրում:

Կանաչապատում

Համայնքն ունի կանաչապատման 50000 քմ մակերես: Տարածքներում առկա են 1200 ծառ և 200 թուփ: Ոռոգման ջրագծերի ընդհանուր երկարությունը կազմում է 1850 գծմ: Այս բնագավառում կանաչ տարածքների ընդլայնման և ոռոգման ջրագծերի հիմնական վերանորոգման պահանջ կա:

Քաղաքային գերեզմանատունը զբաղեցնում է 4 հա տարածք: Այն ճարտարապետորեն տեղաձևած չէ: Չունի ցանկապատ, ծառերն ու թփերը խոշոր և մանր եղջերավոր անասուններից պաշտպանելու համար: Խմելու ջրագիծը 300 գծմ է: Ոռոգման ցանցի առուների երկարությունը 1800 գծմ:

Առևտուր և սպասարկում

Վեդի քաղաքում գործում են առևտրի 82 օբյեկտներ, սպառողական ապրանքների՝ 22, գյուղատնտեսական արտադրանքի՝ 5, հանրային սննդի՝ 7 և կենցաղային ծառայություններ մատուցող՝ 13 օբյեկտներ:

Համայնքում գործող բոլոր առևտրի օբյեկտները իրականացնում են մանրածախ առևտուր:

Բնապահպանություն

Վեդի քաղաքի հողերը և մթնոլորտը աղտոտված են տարբեր վնասակար նյութերով: Վեդի քաղաքի բոլոր հողերը հատում են աղտոտման բարձր մակարդակի շեմը (ԱԳԳ=32-128):

Վեդի քաղաքի մեկ բնակչին հասնող ընդհանուր օգտագործման կանաչ տարածքի չափանիշը 7.5 մ²/մարդ, որը 2-2,2 անգամ պակաս է նորմատիվայինից:

Եկամուտների հաշվառում և գանձում

Կարևորելով Վեդի քաղաքի բյուջեի եկամուտների հավաքագրման գործընթացը այն իրականացվում է գույքային հարկերի տվյալների միասնական բազա:

2009թ. Ստեղծվել է վարձակալության բազա, որի շնորհիվ բարձրացել է վարձակալական վճարների հավաքագրման տոկոսը:

Անշարժ գույքի կառավարում

Վեդի քաղաքի վարչական տարածքը 1660.17 հեկտար է, այդ թվում՝ բնակավայրերի հողեր 304 հա, 38 հա արդյունաբերության, էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների 12 հա և այլն:

Վեդի քաղաքում հաշվառված է բազմաբնակարան 38 շենքեր, վթարային են

համարվում 2 բազմաբնակարան շենքեր, որոնցում կան 60 բնակարան և բնակվում են 300 մարդ:

Ներդրումային ոլորտ

Ներկայումս Վեդու քաղաքապետարանն իրականացնում է աշխատանքներ՝ ուղղված քաղաքում ներդրումային դաշտի բարելավմանը: Մշակվել են պոտենցիալ ներդրողներին ցուցաբերվող օժանդակության հնարավոր ուղղությունները: Վեդու քաղաքապետարանը աջակցում է հետևյալ գործընթացներին.

- ներդրողի համար ընդունելի և ներդրումային ծրագրերի իրականացման համար համապատասխան հողատարածքների վերաբերյալ առաջարկների տրամադրում,
- աջակցություն ներդրողին՝ հողատարածքների իրավական կարգավիճակի մասին լիարժեք և սպառիչ տեղեկատվություն ստանալու համար,
- աջակցություն ներդրողին՝ ներդրումային ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթերի (տեխնիկական առաջադրանք, անհրաժեշտ թույլտվություններ և այլն) ձեռք բերման գործում,
- հողատարածքների օգտագործման վարձավճարների արտոնյալ կարգի հաստատման հնարավորությունների ու պայմանների դիտարկում:

2008թ. Գերմանական տեղեկատվական ընկերության հետ համատեղ իրականացվել է սպասարկման գրասենյակի ստեղծման ծրագիրը: Որը հաջողությամբ ավարտվել է և որի արդյունքում բարձրացվել են ինչպես սպասարկման այնպես էլ սեփական եկամուտների հավաքագրման որակը:

2010-2011թթ. պետական բյուջեով իրականացվել են մի շարք ծրագրեր ուղղված բնակարանային ֆոնդի պահպանմանը, որն է՝ երեք շենքերի տանիքիների նորոգում:

2011թ. ընթացքում տարվել են բանակցություններ և կնքվել համագործակցության համաձայնագիր Քաունթերփարթ ընկերության հետ՝ ուղղված քաղաքային ենթակառուցվածքների զարգացմանը և խոշոր ներդրումային ծրագրերի իրագործմանը:

Քաունթերփարթ ընկերության հետ համատեղ մշակվել է Վեդու երաժշտական դպրոցի տանիքի և պատուհանների փոփոխման և արդիականացման ծրագիրը:

Գովազդ

Արտաքին գովազդի ոլորտը Վեդի քաղաքում կարգավորվում է «Գովազդի մասին», «Տեղական տուրքերի վճարների մասին», «Բազմաբնակարան շենքերի կառավարման մասին» ՀՀ օրենքներով:

Սահմանվել է քարտեզի տեսքով Վեդի քաղաքի գովազդային գոտին: Վեդի քաղաքի սահմաններում գովազդը տեղաբաշխվում է վահանակների, լուսատախտակների, պլակատների, հայտարարությունների, շենքերի մուտքերի և պատուհանների հովհարների (մարկիզներ) և այլ նյութական կրիչների և տեխնիկական միջոցների ձևով: Վեդի քաղաքում 2012թ . նոյեմբերի 1–ի դրությամբ տեղադրված են 28 փոքր, մեծ և միջին չափերի գովազդային վահանակներ և 4 վահանակներ էլեկտրասյուների վրա, որոնք գտնվում են կենտրոնական փողոցի վրա:

2012-2016թթ. նախատեսվում է ստեղծել գովազդի դիմաց գանձվող գումարների միասնական բազա, որը հնարավորություն կտա բարձրացնել գանձվող գումարների չափը:

Կրթություն

Նախադպրոցական ուսումնական հաստատություններ

Վեդու քաղաքապետարանի ենթակայությամբ գործում են 3 համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատություններ, երեխաների ցուցակային թիվը կազմում է 360 երեխա, մանկավարժական անձնակազմը՝ 20 մարդ:

2008-2012թթ. ընթացքում ըստ հաստատված աշխատանքային ծրագրի՝ կազմակերպվել են նախադպրոցական կրթության չափորոշիչներին համապատասխան միջոցառումներ, պահպանվել են սննդի նորմատիվային չափորոշիչները, օրական մեկ երեխայի հաշվարկով սննդի վրա ծախսվել է 250 դրամ:

Քաղաքապետարանի կողմից պարբերաբար անցկացվել են ստուգումներ նախադպրոցական կրթության չափորոշիչները պահպանելու համար:

Գազաֆիկացվել է և արդեն 2012թ. Ջմռանը պատրաստ է աշխատելու նաև Վեդու թիվ 2 մանկապարտեզը:

Առաջիկայում նախատեսվում է երեք մանկապարտեզների համար իրականացնել գույքի ձեռք բերման ծրագիր:

Վեդի քաղաքում գործում են երեք դրոցներ, որից մեկը՝ ավագ, երկուսը հիմնական: Դպրոցներում սովորողների թիվը 2800 մարդ է: Դպրոցն ավարտածները

հիմնականում շարունակում են ուսումը Երևան քաղաքում: Վեդի քաղաքի կրթական ցենզը ներկայացված է գրաֆիկ 2-ում:



Արտադպրոցական կրթություն

Վեդի քաղաքում գործում են 3 արտադպրոցական կրթական հաստատություններ: Դրանք են ՝ Երաժշտական դպրոցը, Գեղարվեստի և սպորտ դպրոցները: Յուրաքանչյուր տարի շուրջ 400 երեխա օգտվում են այդ դպրոցներից: Նախորդ տարիների ընթացքում ամբողջապես վերանորոգվել է Վեդու մարզադպրոցը: Վեդու Գեղարվեստի դպրոցում 2012թ. անցկացվել է լոկալ ջեռուցման համակարգ:

2012թ. Վերանորոգվել է Երաժշտական դպրոցի 1-ին մասնաշենքի տանիքը և հոսանքագծերը:

Առողջապահություն

Վեդի քաղաքում գործում է Վեդու Բժշկական կենտրոն, Վեդու ծննդատուն բժշկական հաստատությունները:

Վեդու քաղաքապետարանը 2008-2012թթ. աջակցել է Վեդու ԲԿ-ին պոլիկլինիկական բաժանմունքում պատուհանների և հիվանդանոցի համար թթվածնային համակարգի ձեռք բերմանը:

Վեդու քաղաքապետարանը հոգում է անապահով ընտանիքների անդամների բուժման ծախսերը:

Սոցիալական ապահովություն

2008-2012թթ. Վեդի քաղաքում փաստագրվել են 1200 ընտանիքներ, որոնցից 400 ստացել են ընտանեկան նպաստներ:

Վեդու քաղաքապետարանը 4 տարիների ընթացքում դրամական օգնություն է տրամադրել շուրջ 200 ընտանիքների, փաստացի ծախսը կազմել է շուրջ 20 մլն դրամ:

Յուրաքանչյուր նոր ծնված երեխայի և նորապսակներին խրախուսման կարգով տրամադրվում է նվերներ, 4 տարիների կտրվածքով ծախսը կազմել է 1029.8 մլն դրամ:

Թաղման ծախսերի համար 2008-2012թթ.. օգնություն են ստացել 190 ընտանիք:

Քաղաքապետարանի և սոցիալական հարցերով քաղաքացիների կապը ամրապնդելու նպատակով մշակվել և կայքում բացվել է «Հաճախակի տրվող հարցեր» խորագիրը, որը հնարավորություն է տալիս քաղաքացիներին տեղեկանալ իրենց հուզող հարցերի պատասխաններին:

Երեխաների իրավունքների պաշտպանություն

Վեդի քաղաքում գործում են 3 մանկապարտեզներ, 3 արտադպրոցներ: Քաղաքապետարանի աշխատակազմում գործում է երեխաների իրավունքների պաշտպանության մասնագետ, խնամակալության և հոգաբարձության մարմնի գործառույթներն իրականացնում է օրենսդրությամբ սահմանված կարգով ստեղծված և հասարակական հիմունքներով գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովը:

Վեդի քաղաքում չի մատուցվում ներառական կրթություն / ներառական կրթությունը կրթական այնպիսի ծրագիր է, որը բացառում է ամեն տեսակ խտրականություն երեխաների նկատմամբ, ապահովում է հավասար վերաբերմունք բոլոր մարդկանց հանդեպ, կրթական համակարգում ստեղծում է ուրույն պայմաններ առանձնահատուկ կրթական կարիքներ ունեցող անձանց համար/: 2012-2016թթ. անհրաժեշտ է արտադպրոցական մատուցվող ծառայությունների մեջ ներառել նաև ներառական կրթության մատուցումը:

Երիտասարդության հետ տարվող աշխատանքներ

Երիտասարդության ոլորտի իրավական նորմատիվային միակ փաստաթուղթը երիտասարդական պետական քաղաքականության հայեցակարգն է, որը սահմանում է երիտասարդական պետական քաղաքականության սուբյեկտները, քաղաքականության սկզբունքները, իրականացման նպատակներն ու հիմնական ուղղությունները:

Երիտասարդական կյանքի զարգացման գործում ակտիվ մասնակցություն ունի Վեդու քաղաքապետարանը: Վեդու քաղաքային համայնքի տարեկան բյուջեում

նախատեսվում է 2.5 մլն դրամ անապահով ընտանիքների ուսանողների ուսման վարձերի վճարման համար: 2008-2012թթ. ուսման վարձավճար է փոխանցվել 10 մլն դրամ՝ 250 անապահով ուսանողի համար: Եվ անապահով երեխաների համար անվճար ավտոբուս Վեդի-Երևան-Վեդի տեղափոխելու համար: 4 տարվա համար ծախսվել է 7.2 մլն դրամ:

Ֆիզիկական կուլտուրա և սպորտ

Քաղաքում գործում է մեկ մարզական ուսումնական հաստատություն: 4 տարիների ընթացքում 48 մլն դրամ է ծախսվել Վեդու սպորտ դպրոցի կողմից մատուցվող ծառայությունների որակի պահպանման համար: Վեդու սպորտ դպրոցում 100 երեխա ստանում են անվճար ծառայություն: Վեդի քաղաքում մարզական նշանակալի կառույցն է՝ «Վեդի» ֆուտբոլադաշտ: Քաղաքում գործում է ֆուտբոլի երիտասարդական թիմը <Վերդա> անունով: Այն 4 տարիների ընթացքում մասնակցել է բազմաթիվ հանրապետական մրցումների:

Մշակույթ

Վեդի քաղաքում գործում է Վեդու մշակույթի տուն համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը: 60 միջոցառման կազմակերպման և բնակչության լայն հատվածներին մատուցման համար Վեդու քաղաքապետարանը 4 տարիների ընթացքում ծախսել է 26 մլն դրամ: 2012-2016թթ. նախատեսվում է շահագործման հանձնել Վեդու մշակույթի տունը

ԲԱԺԻՆ 2. Հիմնախնդիրներ և 2012-2016 թթ. նախատեսվող միջոցառումներ

ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ 2012-2016 ԹՎԱԿԱՆԻՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Հ/հ	Խնդիրների անվանումը	Արժեքը
1	Համայնքի կողմից մատուցվող ծառայությունների որակի բարձրացում	220000.000
2	Արտադպրոցական կրթության ոլորտում մատուցվող ծառայությունների որակի բարձրացում	226000.000
3	Նախադպրոցական կրթության ոլորտում մատուցվող ծառայությունների որակի բարձրացում	168000.000
4	Կոմունալ ծառայության հիմնարկի պահպանման ծախսեր	100000.000
5	Գիշերային լուսավորության ցանցի ընդլայնում /Կասյան մի հատվածը, Մ.Մաշտոց փողոց, Կոմիտաս փողոցի մյուս հատվածը, 26 Կոմիսարներ փողոցը, Արցախ փողոցը, Պուշկին փողոցը/	9000.000
6	Լուսավորության ցանցի էլ. էներգիա	22400.000
7	Կասյան փողոցի մյուս հատվածի ասֆալտապատում	50000.000
8	Կոմիտաս փողոցի ասֆալտապատում	50000.000
9	Կասյան փողոցի բազմաբնակարան շենքերի բակերի ասֆալտապատում	17000.000
10	Փողոցների բարեկարգում և շահագործում	5000.000
11	Մայթերի սալիկապատում /Կասյան փողոց, Կոմիտաս փողոց/	3000.000
12	Թափառող շների դեմ պայքար	1500.000
13	Կանաչապատում /Ա.Սիմոնյանի անվան հրապարակում, կենտրոնական փողոցների զազոններում, հուշարձանի տարածքում, բազմաբնակարան շենքերի բակերում/	6000.000
14	Սան.մաքրման աշխատանքներ համայնքի տարածքում	10000.000
15	Խաղահրապարակների տեղադրում բազմաբնակարան շենքերի բակերում	3500.000
16	Աղբակույտերի վերացում համայնքի տարածքից	3000.000
17	Զբոսայգիների կառուցում համայնքի այլ հատվածներում երկու հատ	4000.000
18	Հակակարկտային կայանների տեղադրում	24000.000
19	Մանկապարտեզներում խաղահրապարակների տեղադրում	1800.000
20	Բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգում /3 շենք/	9000.000
21	Համաքաղաքային և հանրապետական միջոցառումների կազմակերպում	12000.000
22	Բազմաբնակարան շենքերի պատերի նկարազարդում	2000.000
23	Մանկապարտեզներում նոր խմբասենյակների ստեղծում	10000.000

24	Մանկապարտեզների խմբերում երեխա թվի նվազեցում	2000.000
25	Նստարանների տեղադրում համայնքի բանուկ փողոցների մայթերին	2000.000
26	Հանրային զուգարանների տեղադրում	5000.000
27	Գեղարվեստի դպրոցի պատուհանների փոփոխում	7000.000
28	Երաժշտական դպրոցի համար երաժշտական գործիքների ձեռք բերում	500.000
29	Գրադարանի համար փափուկ գույքի ձեռք բերում	1000.000
30	Գրադարանի գրքերի ավտոմացում	500.000
31	Արցախ փողոցի ասֆալտապատում	5000.000
32	Վեղու թիվ 2 մանկապարտեզի շենքի տանիքի վերանորոգում	9000.000
	Ընդամենը	989200.000

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ, ՆՊԱՏԱԿՆԵՐ, ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ԽՆԴԻՐՆԵՐ

Ծրագրի անվանումը - *ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ*

Առաքելություն

Համայնքի բնակչությանը որակյալ և բազմապրոֆիլ ծառայությունների մատուցում

Իր առաքելության շրջանակներում համայնքն ունի ռազմավարական նպատակ. այն է՝ մատուցվող ծառայությունները դարձնել ավելի որակյալ և մատչելի հասարակության բացարձակապես բոլոր խավերին:

Հիմնահարց

Ընդհանուր բնույթի համայնքային ծառայությունների մատուցման մակարդակի բարձրացում

Նպատակ

- Բարձրացնել ընդհանուր բնույթի համայնքային ծառայությունների մատուցման մակարդակը:

Երկարաժամկետ խնդիրներ

1. 4 տարվա ընթացքում մատուցել ընդհանուր բնույթի համայնքային ծառայություններ՝ բարձրացնելով աշխատողների աշխատավարձը _____ %-ով:

2. Վերապատրաստել աշխատակազմի աշխատողներին՝ ատեստավորում անցնելու համար /4 տարի/:

3. Վերանորոգել համայնքապետարանի վարչական շենքի դահլիճը /4 տարի/

4. Գույքի և տեխնիկայի ձեռք բերում և վերանորոգում քաղաքապետարանի աշխատասենյակների համար /4 տարի/:

Քաղաքապետարանի աշխատակազմի առաքելություն է սպասարկել համայնքի բնակչությանը, մատուցել բազմապրոֆիլ ծառայություն: Բարձր մակարդակով ծառայություն մատուցելու համար անհրաժեշտ է վերապատրաստել աշխատակիցներին, բարձրացնել նրանց աշխատավարձը, ունենալ ժամանակակից տեխնիկա և հարմարավետ գույք:

Ծրագրի ընդհանուր արժեքը **220.000.000** դրամ

Ծրագրի իրականացման ժամանակացույցը 2012-2016թթ..

Ծրագրի անվանումը - *ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԵՎ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ*

Հիմնահարցեր

• Նախադպրոցական և արտադպրոցական ծառայություն իրականացնող հաստատությունների շենքային, գույքային և նյութատեխնիկական միջոցների անբավարար վիճակ:
• Մատուցվող ծառայությունների ծավալների ընդլայնման անհրաժեշտություն:
• Կրծողների դեմ պայքարի իրականացման անհրաժեշտություն

Նպատակ

• Բարելավել նախադպրոցական և արտադպրոցական կրթության ոլորտում մատուցվող ծառայությունների որակը:

Երկարաժամկետ խնդիրներ

1. Պահպանել նախադպրոցական և արտադպրոցական կրթության ոլորտում ծառայությունների մատուցման ընթացիկ մակարդակը (4 տարի):
2. Նախադպրոցական և արտադպրոցական հիմնարկներում կատարել դեռատիզացիա:
3. Բարեկարգել բոլոր մանկապարտեզների բակերը և խաղահրապարակները (4տարում):
4. 4 տարվա ընթացքում մանկապարտեզների համար ձեռք բերել նոր գույք
5. Վերանորոգել Վեդու թիվ 2 մանկապարտեզի շենքի տանիքը
6. Մանկապարտեզներում խմբերում երեխա թվի նվազեցում նոր խմբերի բացման հաշվին
7. Երաժշտական դպրոցի համար երաժշտական գործիքների ձեռք բերում
8. Գեղարվեստի դպրոցի պատուհանների փոխարինում նորով:
9. Բարձրացնել նախադպրոցական և արտադպրոցական կրթության ոլորոտում ծառայություններ մատուցող աշխատողների որակավորումը (4 տարում-15 աշխատող)

Համայնքում գործում են 3 նախադպրոցական հիմնարկներ, 1 երաժշտական դպրոց, 1 գեղարվեստի դպրոց, 1 մանկապատանեկան մարզադպրոց: Նախադպրոցական հիմնարկներում գործում են 12 խմբեր 410 երեխա հաճախելիությամբ, 63 աշխատողներով:

Համայնքի նախադպրոցական և արտադպրոցական հիմնարկները հիմնականում ապահովված են մասնագիտական կադրերով, որոնց շնորհիվ հաջողվել է պահպանել այդ հիմնարկների աշխատանքային ռիթմը: Մանկապարտեզները ապահովված են տիպային շենքերով, ջրով, էլեկտրաէներգիայով և գազաֆիկացված են: Պարբերաբար կատարվում են մասնակի վերանորոգման աշխատանքներ:

Նախկին թիվ 3 մանկապարտեզի շենքում տեղակայվել է Երաժշտական դպրոցը (150 երեխա, 27 աշխատող).

Երաժշտական դպրոցներում գործում են դաշնամուրի, լարային, փողային և

ժողգործիքների խմբեր: Երաժշտական դպրոցում անբավարար վիճակում է գտնվում դահլիճը, ներքին հարդարումը: Կա որոշ երաժշտական գործիքների պակաս:

Համայնքի գեղարվեստի դպրոցում 227 սաներ և աշխատում են 26 աշխատողներ:

Ծրագրի ընդհանուր արժեքը 413.500.000 դրամ

Ծրագրի իրականացման ժամանակացույցը 2012-2016թթ..

Ծրագրի անվանումը - **Մատչելի և որակյալ գրադարանային ծառայության մատուցում**

Հիմնահարց

Գրադարանային ծառայության իրականացման ծավալների և մատչելիության պահպանման անհրաժեշտություն, գրքային ֆոնդի թարմացում և արդիականացում:

Նպատակ

Բարձրացնել բնակչության զարգացվածության, իրազեկության և կրթվածության մակարդակը: Ամրապնդել բնակչության ընթերցասեր խավի և գրադարանի կապը:

Երկարաժամկետ խնդիրներ

1. Պահպանել գրադարանային ծառայությունների ընթացիկ մակարդակը (4տարի):
2. 4 տարվա ընթացքում ավելացնել գրադարանի գրքերի քանակը 5%-ով:
3. Էլեկտրոնային գրականության ստեղծում /4 տարի/
4. Գրադարանի համար գույքի ձեռք բերում

Վեդու քաղաքային համայնքում գործում է 1 գրադարան, երկու մասնաճյուղով՝ մանկական և քաղաքային: Գրադարաններն ունեն մոտ 50 տարվա պատմություն, նրանից օգտվում են ոչ միայն Վեդի քաղաքի այլ նաև հարակից գյուղերի բնակչությունը: Վերջին տարիների տնտեսական անկման և ֆինանսական սղության պատճառով վերանորոգման չի ենթարկվել: Չի թարմացվել գույքը: Գրականությունը յուրաքանչյուր տարի թարմացվում է շատ քիչ քանակով: Ներկայումս գրքային ֆոնդը կազմում է մոտավորապես 64000 գիրք: Համարյա ամբողջ գրականությունը հին է և պատառոտված: Գրադարանի միջոցով հնարավոր կլինի բնակչության ազատ ժամանակն ավելի հետաքրքիր ու

արդյունավետ անցկացնել, ապահովելով անհրաժեշտ պայմաններ բնակիչների կրթական և հոգևոր զարգացման համար:

Ծրագրի ընդհանուր արժեքը	24.500.000 դրամ
Ծրագրի իրականացման ժամանակացույցը	2012-2016թթ..

Ծրագրի անվանումը - **Երիտասարդության հետ կապերի ամրապնդում**

Հիմնահարց

Երիտասարդության հետ տարվող աշխատանքների անբավարար վիճակ:

Նպատակ

Բարելավել երիտասարդության հետ տարվող աշխատանքներն ու ակտիվացնել շփումները:

Երկարաժամկետ խնդիրներ

1. 4 տարվա ընթացքում սոցիալապես անապահով ուսանողների համար կազմակերպել անվճար երթևեկություն (տարեկան 24 մարդ) և տրամադրել ֆինանսական օգնություն ուսման վարձերի գծով (տարեկան 24 մարդ)

Երիտասարդության խնդիրը համայնքի համար համարվում է առաջնային: Վեդի քաղաքում կա 1000 ուսանող: Նրանց 80%-ը սովորում են Երևան քաղաքում: Սոցիալապես անապահով ընտանիքների համար, որոնց ամսական եկամուտը կազմում է մոտ 40000- 60000 դրամ, անհնարին է ուսման վարձի և երթևեկության խնդիրը լուծել: Յուրաքանչյուր տարի քաղաքային համայնքի բյուջեից մոտ 3 մլն. դրամ է հատկացվում ուսման վարձի և 1.5 մլն. դրամ էլ երթևեկության համար: Այս գումարի շրջանակներում հնարավոր է լինում մոտ 24-30 ուսանողի ուս.վարձ վճար և ևս այդքանի համար էլ ապահովել անվճար երթևեկություն:

Այս երկու խնդրի լուծումը ամրապնդում է երիտասարդության հետ կապը,

վստահություն է առաջացնում և հնարավորություն է տալիս ապագայում ունենալ հասարակության համար պիտանի մարդիկ:

Ծրագրի ընդհանուր արժեքը 18.000.000 դրամ

Ծրագրի իրականացման ժամանակացույցը 2012-2016թթ..

Քաղաքաշինության և տարածքային զարգացում

Առաքելություն

Կազմակերպել քաղաքաշինական աշխատանքներն այնպես, որ համայնքը զարգանա ըստ գլխավոր հատակագծի և ապահովվի նրա յուրահատուկ ճարտարապետական տեսքը:

Քաղաքաշինություն

Հիմնահարցեր

1. Լուսավորության ցանցի ընդլայնում
2. Լուսավորության ցանցի էլ.էներգիա բնականոն մատակարարում
3. Կասյան փողոցի մյուս հատվածի ասֆալտապատում
4. Կոմիտաս փողոցի մյուս հատվածի ասֆալտապատում
5. Արցախ փողոցի ասֆալտապատում
6. Կենտրոնական փողոցին հարող փողոցների բարեկարգում և շահագործում
7. Մայթերի սալիկապատում
8. Նստարանների տեղադրում համայնքի բանուկ փողոցների մայթերին
9. Խաղահրապարակների կառուցում բազմաբնակարան շենքերի բակերում
10. Բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգում

Նպատակը

Բարեկարգել համայնքը այնպես, որ ունենա գլխավոր հատակագծին և քաղաքաշինական նորմերին համապատասխան տեսք

Ծրագրի ընդհանուր արժեքը 150.000.000 դրամ

Ծրագրի իրականացման ժամանակացույցը 2012-2016թթ..